ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունիսի 2015 թվական N 77–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՕԴԱՄՂԻՉ ՀՐԱՑԱՆԻ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2015 թվականի օգոստոսի 2-ից 12-ը Երևանում կայանալիք Համաշխարհային համահայկական խաղերի հրաձգության մրցումներին նախապատրաստվելու համար մարզադպրոցին անհրաժեշտ է ձեռք բերել օդամղիչ հրացանի փամփուշտներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի ներկայացրած նախահաշիվը՝ համայնքի **ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի <<Հրաձգության մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օդամղիչ հրացանի փամփուշտներ ձեռք բերելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան
Տ. Փանոսյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

15 հունիսի 2015թ.
ք.Գյումրի